ը: Իշխանն ասաց՝ քո դուստրը իր կյանքը շնորհեց և նրան ամենը պատմեց: Մարդը ասաց՝ դու չկարողացար մի կին պահել, արդ ինչո՞ւ (ինչպես) սպանեցիր, տուր նրա մարմինը: Նույն Սահակին հանձնեց նրան, գնացին քարերի տակից հանեցին և տարան Եղվարդ գյուղը: Հավաքվեցին քահանաներ և մեծ ժողովուրդ ու թաղեցին եկեղեցու հարավային պատի տակ: Արեգակնամտին մտան եկեղեցի երեկոյան պաշտամունքը կատարելու: Արարողության ավարտից հետո ոմանք գնացին, որ համբուրեն նրա գերեզմանը և տեսան կրակի մանր կայծերի նման կայծեր գերեզմանի վրա: Այնքան սպասեցին այնտեղ,մինչև որ լույսը նվազեց: Ես լսելով, գնացի հավաստի կերպով իմացա Մկրտիչ քահանայից, անունը, թվականը և հազար հարյուր քառասուն (1691) գրեցի տապանի վրա:

ԳԼՈՒԽ ԿԳ
ՊԱՐՈՆ ԱՅՎԱԶԻ ԵՎ ՆՐԱ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կարբի գյուղաքաղաքից, որ Արարատյան երկրում է, Հակոբջան անունով, ազգությամբ հայ մի մարդ կար, հարուստ էր ու ճոխ: Սա ուներ երեք որդի՝ Դովլաթբեկ, Մսրխան և Աղլուբաբ: Ինքը՝ Հակոբջանը, իր ավագ որդի՝ Դովլաթբեկին ամուսնացրեց, իսկ ինքը գնաց օսմանցիների երկրորդ վաճառականության: Պրուսա քաղաքում, որ Բուրսան է, մեռավ: Սրա Դովլաթբեկ որդին ամուսնացրեց եղբայրներին, որոնք հնազանդ էին նրան: Ինքը՝ Դովլաթբեկը սկսեց բարեգործություն անել. նախ իր տունը լցրեց ամենայն բարիքներով, բազմացրեց անասունները, այգիները, ջրաղացները, սպասքները և այլ գույքեր:

Ապա սկսեց հոգևորականների վերաբերմամբ, որովհետև սիրում էր քահանաներին, մենակյացներին, վանքերն ու անապատները: Ինչ որ նրանց պետք էր, տալիս էր, թե զգեստ, թե գիրք, թե մոմ, թե խունկ, թե ձեթ և այլ բաներ, ինչ պակասություն որ կար, լրացնում էր: Նաև մենակյացների հանդերձանք, շալ, մազեղեն, կոշիկներ, իսկ պասի ուտելիքներ անպակաս տալիս էր:

Նա բազմաթիվ որդիներ ունեցավ՝ Այվազ, Ստեփանոս, Մալխաս, Ոսկան, Աղաբաբ և Մկրտիչ: Իսկ Մսրխանը սերեց Հակոբ-

ջանին ու Պողոսին: Աղլուբաբը ունեցավ Երեմիային և Նիկողայոսին: Դովլաթբեկը ինքը գնաց Աղվանից Գանձակ, որ Գյանջան է, որպեսզի մետաքս գնի ու այնտեղ վախճանվեց: Նրա մարմինը բերեցին իրենց Կարբի գյուղը, թաղեցին Սուրբ Կիրակոս եկեղեցուն մոտիկ՝ այն գերեզմանում, որ ինքն էր գնել հազար հարյուր քսանհինգ (1676) թվի հունվարի հինգին:

Իսկ Մսրխանը մեռավ Զմյուռնիայում, որ Իզմիրն է, և այնտեղ թաղվեց: Իսկ Աղլուբաբը մեռավ Ջոջոնեթում, որ Գիլանն է, և թաղվեց Արտաբիլում: Թող սրանց հանգիստ ու արքայություն լինի Քրիստոսի կողմից, ամեն:

Մնացած բոլորը միաբան են՝ ավելի քան երեսուն հոգի արու և էգ միևնույն տանը: Դովլաթբեկի ավագ որդի պարոն Այվազն էր բոլորի գլխավորը: Սա՝ այս պարոն Այվազը, բարի գործերի ավելի հետևող եղավ, քան իր հայրն էր: Նախ սկսեց իր տունը կարգավորել. իր ամբողջ ընտանիքը դարձրեց միաբան, միակամ, միախորհուրդ, միասիրտ, ինչպես որ մի շունչ և մի հոգի: Ոչ ոք իր մասին չէր ասում, որ ինքը ավագ է, կամ մեծ, կամ առաջին. բոլոր արուները ենթարկվում էին պարոն Այվազին, իսկ կանայք ենթարկվում էին բարեպաշտ ու աստվածապաշտ նրա մայր Մարիամին՝ հլու և հպատակ, հնազանդությամբ ու խոնարհությամբ և ամեն բարեձևությամբ:

Նրանից հետո հետևեց շենքերի և ինչքերի. բազմացրեց ունեցվածքները, բերքերը, անասունները, խաշները, ձիերն ու ջորիները: Տնկեց այգիներ ու բանջարանոցներ, շինեց մի մեծ լիճ այն տեղը, որ կոչվում է Կարբու դաշտ, գարնան եղանակներին լցնում էր ջրի հոսքերով, որպեսզի ամռանը բավականացնի գյուղի հանդերին: Նաև այլ բազմաթիվ նյութական բարիքներ ստեղծեց և ավելացրեց իրենց համար:

Ինձ մնում է խոսել նրա հոգևոր բարությունների մասին նաև: Քանզի սիրում էր վանականներին, անապատավորներին, ուստի նրանց բոլոր կարիքները լրացնում էր՝ թե հոգևորը, թե մարմնավորը, քանզի իր եղբայրներից մեկին ուղարկում էր վաճառականության, մյուսին Պարսկաստան, մի այլին Հունաստան՝ գնելու և վաճառելու, իսկ շահաբաժնից տալիս էր եկեղեցիների կարիքներին՝ խունկ, մոմ, ձեթ, զգեստ, եկեղեցական անոթներ, նաև մարմնավոր